տուֆեան պատճառով ամեն կողմից անճարացած մեծահաւատ յուսով և ամենաջերմեռանդ սիրով ապաւինած ՍուրբՍտեփան նոսի բարեխօսութեանը նորա նշխարքն ու աջը Սաղհանու վանքից բերած են քաղաք մեծ հանդէսով և պաշտամամբ, որից յետոյ և անձրեւել է առատապէս[1]: Յետ այսորիկ ասում են. «պատահել է իրանց Յովհաննէս Նազարեանի տանը հայկերութեան ժամանակ խօսել այդ առարկայի մասին. «ուր Դէորդ համբարձումեանը սկսել է յայտնաբարբառ արհամարհել ըստ իւր կանխիկ սովորութեան՝ Սուրբ Ստեփաննոսի և բոլոր սրբոց նշխարքն և բարեխօսութիւնը, և ոչ այսչափ միայն, այլ և ինքը խմորուած գոլով լիւթերական ազանդով՝ օր քան զօր տարածում է նոյնը պարզամիտ հայոց մէջ, ուստի հետզհետէ պակասում է ժողովրդի յարգանքը դէպի եկեղեցական զարդերը, պատկերներն ու հայրենադիր աւանդութիւնները»:

Այս ամենի պատճառը քահանայք համարում են յիշեալ Դէորդի որդի վարպետ Սարգսին, որ Կերմանիայից եկել կարգել է մի վարժատուն քաղաքիս մէջ:

Այս յայտարարութիւնից մի քանի օր յետոյ Ս. Համբարձումեանի եղբայր Յարութիւնն էլ խնդրանքով յայտնեց կոնսիստորիային, որ իւր եղբայր Սարգիսը սովորելով լութերականութիւն, քանի տարուց ի վեր եկել բացել է ուսումնարան և առանձին քանի անձինք շրջել իւր կողմը որպէս և իւր հօրն, և հանապազ հրաւիրում համոզում է իրան էլ, որ ուրանայ հայոց եկեղեցին:

61. Քահանայք պաշտօնական գրութեամբ նշանակեցին սուտ վարպետ Սարգսի և նորա հետեւողների ուսմունքն, որ է այս[2]).

---

[1])Այս չերմեռանդ կրօնական սովորութիւնը այսօր եւս —1892— կայ և չարունակւում է Շամախում:

[2])Հայ բողոքականաց տալօրինակ ուսմանց մասին բացատրութեամբ հանդերձ վրդը ինչ վերեւ ինչ որ հարկաւորն է դրել եմ. դրել են և չատերը Աւաքելական ուղղափառ եկեղեցւոյ պաշտպանք և ջատագովք, ուստի աւելորդ է կրկնել:

Միայն ցաւալի է, որ մի քանի տգէտ մարդիկ (Շամախեցի բողոքականք) թողուով իրենց նախնեաց 1900 տարուայ ուղիղ ճանապարհը, որ առաջնորդում է դէպի ճշմարտութիւն, սէր, խաղաղութիւն, և յետ աստ